

**ՎԼԱԳԻՄԻՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*ԵՊՀ սոցիալական հոգեբանության  
ամբիոնի դոցենտ, հ.գ.թ.*

**ԱԼԻՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

*ԵՊՀ սոցիալական հոգեբանության ամբիոնի հայրորդ*

**ԹԵԹԼ ԱՍՏԻՃԱՆԻ ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՆԱ-  
ԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱԽԵՐԻ ԴՐՍԱՈՐՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Հոդվածում ներկայացված են թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի ուսումնասիրության արդյունքները, քննարկվում են դրանց դրսևորման առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** մտավոր հետամնացություն, զարգացում, նախադպրոցական տարիք, վախեր, տագնապայնություն:

Երեխայի զարգացման ընթացքում անխուսափելի է վախերի առաջացումը, և վերջիններս սովորական երևույթ են հանդիսանում երեխայի զարգացման ընթացքում: Երեխայի զարգացման յուրաքանչյուր փուլում դրանք ունեն իրենց զարգացման և դրսևորման առանձնահատկությունները [6]:

Ինչպես նորմալ զարգացում ունեցող, այնպես էլ զարգացման տարբեր խնդիրներ ունեցող երեխաների վախերի հիմնահարցին զգալիորեն մեծ ուշադրություն է հատկացվել (Վ.Ն.Մյասիշչև, Տ.Ա.Նեմչին, Գ.Ն.Իսան, Վ.Վ.Կովալյով, Վ.Վ.Լեբեդիևսկի և այլք): Գաղտնիք չէ, որ թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների վախերն արտահայտվում են որոշակի օրինաչափությունների շրջանակներում: Այդ օրինաչափությունների, և առհասարակ, թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների վախերի առանձ-

նահատկությունների ուսումնասիրման նպատակով մեր կողմից իրականացվել է հետազոտություն, որի շրջանակներում ուսումնասիրվել է թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող 50 երեխան:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ տվեց առանձնացնել թեթև մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի դրսևորման մի շարք առանձնահատկություններ:

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մոտ վախերն ավելի թույլ էին արտահայտված, քան մեր կողմից հետազոտված նորմալ զարգացում ունեցող նրանց հասակակիցների մոտ: Այսպես, մեր կողմից ուսումնասիրված նորմալ զարգացում ունեցող երեխաների խմբում վախերի մակարդակի բարձր ցուցանիշ առկա էր 44%-ի մոտ, այս թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների խմբում այդ թիվը կազմում էր 30% : Կարծում ենք, որ այս հանգամանքը պայմանավորված է մտավոր զարգացման խնդիրներով, որոնք, ինչպես արդեն նշել ենք, հանգեցնում են նաև հուզական ոլորտի զարգացման հետ կապված մի շարք խնդիրների՝ արտացոլվելով նաև երեխայի կողմից շրջապատող աշխարհի ընկալման և այդ

աշխարհի նկատմամբ հուզական վերաբերմունքի դրսևորման յուրահատկություններում:

Առկա են մի շարք առանձնահատկություններ նաև կոնկրետ վախերի դրսևորման տեսակետից: Այսպես, օրինակ, մեր կողմից հետազոտված թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաներից միայն 6-ի (12%) մոտ էին առկա ֆիզիկական վնաս ստանալու վտանգի հետ կապված այնպիսի վախեր, ինչպիսին են վախը կրակից, ջրից, բարձրությունից և այլն: Կարծում ենք, որ այս փաստը պայմանավորված է ինտելեկտուալ անբավարարության հետևանքով իրավիճակը ճիշտ գնահատելու կարողության ոչ բավարար զարգացմամբ, և հնարավոր վտանգավոր իրավիճակն անվտանգից տարբերակելու կարողության ցածր մակարդակով:

Հարկ ենք համարում նշել, որ ինչպես մեր կողմից ուսումնասիրված գրականության մեջ առկա տվյալները, այնպես էլ մեր հետազոտության արդյունքների վերլուծությունը վկայում են այն մասին, որ թեթև մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախը կապված է կոնկրետ իրավիճակների կամ տեղեկությունների հետ, որոնք նրանք ստանում են իրենց անձնական փորձի արդյունքում կամ մտերիմ մարդկանց հետ հաղորդակցման ընթացքում, արտացոլելով երեխայի կենսափորձը:

Շեշտադրելով վերը նշվածը, կարևոր ենք համարում առանձնացնել թեթև մտավոր հետամնացության դեպքում վախերի դրսևորման այնպիսի առանձնահատկություն, ինչպիսին է երեխայի մոտ առկա վախերի և երեխայի կենսափորձի միջև գոյություն ունեցող անմիջական կապը: Մտավոր հետամնացություն ունեցող երեխայի վախերի գենեզը հաճախ պայմանավորված է

նրա կենսական փորձով, այլ ոչ թե արտաքին տեղեկատվությամբ: Ինչպես արդեն նշեցինք, մեր կողմից հետազոտված նորմալ զարգացում ունեցող 50 երեխաներից 26%-ն ուներ վախ ջրից, մինչդեռ նրանցից միայն 14%-ն էր ջրի հետ կապված որոշակի տհաճ միջադեպ ունեցել: Համանման կերպով, կրակի ու հրդեհի հանդեպ վախն արտահայտվում էր մեր կողմից ուսումնասիրված երեխաների 18%-ի մոտ, թեև կրակի վտանգավոր ազդեցության ու հրդեհի հետ կապված որոշակի միջադեպերի անմիջական ականատես եղել էին միայն 10%-ը: Մինչդեռ, թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ինչպես նշված, այնպես էլ մի շարք այլ իրավիճակների ու երևույթների նկատմամբ վախերն անմիջականորեն արտացոլում էին նրանց անձնական փորձը: Վախը կենդանիներից դրսևորվում էր մեր կողմից ուսումնասիրված երեխաներից 7-ի մոտ (14%): Հարկ ենք համարում նշել, որ մեր կողմից ուսումնասիրված թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաներից 21-ի (42%) մոտ առկա էին բժշկական վախեր: Համեմատաբար ավելի թույլ էին արտահայտված մթության և փակ տարածության վախերը: Դրանք արտահայտված էին մեր կողմից ուսումնասիրված երեխաներից՝ համապատասխանաբար 5-ի (10%) և 4-ի (8%)-ի մոտ: Բարձրության վախն առկա էր ուսումնասիրված թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաներից 6-ի (12%) մոտ :

Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մոտ՝ նորմալ զարգացում ունեցող իրենց հասակակիցների համեմատությամբ, ավելի թույլ էին արտահայտված քնի հետ կապված վախերը: Մեր կողմից հետազոտված երեխաներից միայն 6%-ը նշեցին, որ վախենում են վատ երազներից: Ինչ վերաբերում է մահվան հետ կապված վախերին, ապա մահվան հանդեպ վախն առկա էր

մեր կողմից ուսումնասիրված թեթև մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցականների 20%-ի, իսկ ծնողների մահվան վախճը՝ 10%-ի մոտ :


Կարևոր ենք համարում նաև մեր հետազոտության ընթացքում բացահայտված այն փաստը, որ թեև թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների վախերը տարբերվում են նորմալ զարգացում ունեցող իրենց հասակակից երեխաների մոտ դիտարկվող վախերից նաև իրենց մակերեսայնությամբ և ոչ կայուն բնույթով, այնուամենայնիվ, մի շարք դեպքերում (մեր կողմից հետազոտված երեխաներից 6-ի մոտ (12%)) դրանք կարող են կրել խիստ արտահայտված բնույթ և պայմանավորված լինել իրավիճակի այնպիսի տարրերով, որոնք իրենց զգայական առանձին բնութագրերով երեխայի կողմից ընկալվում են որպես վտանգածին:

Շեշտադրելով թեթև մտավոր հետամնացության դեպքում նախադպրոցական տարիքի երեխաների որոշ վախերի պայմանավորվածությունը զգայական առանձին բնութագրերով և այդ վախերի դրսևորման մոդելային առանձնահատկությունները, հարկ ենք համարում նշել, որ մեր կողմից դիտարկված երեխաների 14%-ի մոտ առկա էին վախեր շատ բարձր ձայներից (փոշեկուլ, խողովակներում խշշացող ջրի ձայնը, ֆեն, երաժշտություն և այլն), որոշակի որակի նյութից (բամբակ, հարթ թուղթ, պլաստիլին, ներկ, մա-

ծուցիկ նյութ և այլն): Նման դեպքերում երեխաները երբեմն ոչ միայն վախ, այլև զգվանք էին զգում, երբ հպվում էին որևէ մածուցիկ նյութի, պլաստիլինի, երբ ձեռքի վրա ջուր էր կաթում, երբ մատները ներկոտվում էին և այլն:

Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մոտ նորմալ զարգացում ունեցող իրենց հասակակիցների համեմատությամբ զգալիորեն թույլ են արտահայտված սոցիալական բնույթի այնպիսի վախեր, ինչպիսին են վախը ծնողներից, ինչ-որ մարդկանցից, որևէ մեկի կողմից պատժվելուց, ուշանալուց և այլն: Կարծում ենք, որ թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մոտ սոցիալական բնույթ ունեցող վախերի ցածր մակարդակը պայմանավորված է մտավոր զարգացման ցածր մակարդակի արդյունքում հուզական ոլորտի այնպիսի առանձնահատկությամբ, ինչպիսին շրջապատողների հուզական վիճակները հասկանալու ցածր ընդունակություն է:

Վերլուծելով հետազոտված թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների վախերի մակարդակները, կարող ենք փաստել, որ հետազոտված թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաներից 15-ի (30%) վախերի մակարդակը բարձր էր, 16-ն (32%) ունեին վախերի միջին մակարդակ, իսկ 19-ը՝ (38%) վախերի ցածր մակարդակ ունեին (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հետազոտված թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների վախերի և տազնասպայնության մակարդակների ցուցանիշները

Մեզ հետաքրքրում էին նաև հետազոտվող երեխաների տազնապայնության մակարդակները և վախերի ու տազնապայնության մակարդակների հարաբերակցությունը: Մեր կողմից ուսումնասիրվող թեթև մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցականների տազնապայնության հետազոտությունը ցույց տվեց, որ երեխաներից 17-ի (34%) մոտ առկա էր տազնապայնության բարձր մակարդակ, 18 (36%) երեխայի տազնապայնությունը միջին մակարդակում էր, իսկ 15(30%) երեխայի տազնապայնության մակարդակը ցածր էր (զծապատկեր 1):

Ինչպես երևում է զծապատկերից, մեր կողմից հետազոտված երեխաներից ընդամենը 30%-ն ուներ վախերի բարձր մակարդակ, մինչդեռ տազնապայնության բարձր մակարդակ առկա էր հետազոտվողների 34%-ի մոտ: Վախերի միջին մակարդակ առկա էր 32%-ի մոտ, սակայն տազնապայնության միջին մակարդակ առկա էր հետազոտվողների 36%-ի մոտ: Ինչ վերաբերում է վախերի և տազնապայնության ցածր մակարդակին, ապա այն առկա էր հետազոտվողներից համապատասխանաբար 38 %-ի և 30% երեխաների մոտ:

Այսպիսով, ամփոփելով մեր կողմից հետազոտված թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի հետազոտման արդյունքները, կարող ենք նշել, որ ոչ բավարար ինտելեկտուալ զարգացման հետևանքով հուզական ոլորտի անբավարար զարգացումը հստակորեն արտացոլվում էր նաև թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների վախերի քանակական և որակական բնութագրերում: Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների վախերն առանձնապես էին իրենց մակերեսայնությամբ, ուղղակիորեն կապված էին երեխայի անձնական կենսափորձի հետ: Հարկ ենք համարում նշել նաև, որ մեր կողմից հետազոտված նախադպրոցական տարիքի թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների այնպիսի վախերն, ինչպիսիք են բարձր ձայների, անձանոթ մարդկանց նկատմամբ դրսևորվող և մի շարք այլ վախեր բնորոշ են երեխայի զարգացման ավելի վաղ փուլերին:

*Հոդվածի ներկայացման փարերթիվը՝ 28.11.13թ.*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԼուրնյանՆ. Գ., Սակավամիտ երեխաների հոգեբանություն: Երևան, 1989, էջ 71:
2. Агеева Т. Л. О работе интегративного детского сада «Наш дом»; Особый ребенок: исследования и опыт помощи. Проблемы интеграции и социализации.–М., 2000.– С. 145–147.
3. Александровский Ю.А. Пограничные психические расстройства. – М, Медицина, 1993.– с. 60–83.
4. Громова Т.В. Страна эмоций: Методика как инструмент диагностической и коррекционной работы с эмоционально–волевой сферой ребёнка. – М.: УЦ «Перспектива», 2002. – 48 с.
5. Захаров А. И. Психотерапия неврозов у детей и подростков., Л., Медицина, 1982.– с. 10–212.
6. Захаров А.И. Дневные и ночные страхи у детей.– СПб.: Речь, 2005.–448с.

ИЗУЧЕНИЕ СТРАХОВ ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА С  
ЛЕГКОЙ СТЕПЕНЬЮ УМСТВЕННОЙ ОТСТАЛОСТИ

**ВЛАДИМИР МИКАЕЛЯН**

*Доцент кафедры социальной психологии Ереванского государственного  
университета, кандидат педагогических наук*

**АЛИНА МАНУКЯН**

*Соискатель кафедры социальной психологии  
Ереванского государственного университета*

В статье представлены результаты исследования страхов у детей дошкольного возраста с умственной отсталостью легкой степени, обсуждаются особенности и закономерности их проявления.

*Дата представления статьи: 28.11.13г.*

**THE CHARACTERISTICS OF MANIFESTATION OF FEARS  
OF PRESCHOOL AGE CHILDREN WITH MILD MENTAL RETARDATION**

**VLADIMIR MIKAELYAN**

*YSU, Associate Professor of the Chair Social Psychology, PhD*

**ALINA MANUKYAN**

*Applicant of Social Psychology Department, YSU*

The article presents the results of the study of fears of preschool age children with mild mental retardation and discusses the characteristics and regularities of manifestation of their fears.

*Article submission date 28.11.13*